ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՁՈՐԱԳԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնք,
ՀՀ Լոռու մարզ, ք. Ձորագետ 1փ. 41 Հեռ. 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

N Ե- 01/244

«25» Սեպտեմբերի 2021թ

ՀՀ Լոռու մարզպետ
Պ-ն Ա. Խաչատրյանին

Հարգելի պարոն Խաչատրյան

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ ենք ներկայացնում Ձորագետ համայնքի ղեկավարի 2021թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 36-Ա որոշումը:

Առդիր՝ 2 թերթ:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե գ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 25 » սեպտեմբերի 2021 թվականի N 36-Ա

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15 -Ի N 20-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի 24.09.2021թ. թիվ 02/11./32847-2021 գրությունը,

Որոշում եմ.

1.Ձորագետ համայնքի ղեկավարի 2013թվականի հոկտեմբերի 15-ի «Ձորագետի գյուղապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը հաստատելու մասին » N 20-Ա որոշման հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Հավելվածի 28-րդ կետի 9-րդ ենթակետից հետո լրացնել նոր 9.1 և 9.2 ենթակետեր հետևյալ բովանդակությամբ՝

«9.1) ապահովել բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանով սահմանված՝ աշխատանքի ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերի ստուգումը հանրային պաշտոն զբաղեցնող, հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող, քաղաքացիական աշխատանք կատարող կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձի աշխատանքի ներկայանալիս.

9.2) ապահովել սանիտարահամաճարակային անվտանգության կանոններով սահմանված համապատասխան գրանցամատյանների վարումը, դիտարկումների իրականացումը.»

2) Հավելվածի 33-րդ կետից հետո լրացնել նոր 33.1-րդ կետ հետևյալ բովանդակությամբ՝

«33.1. Աշխատակազմում հանրային պաշտոն զբաղեցնող, հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող, քաղաքացիական աշխատանք կատարող կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք պարտավոր են՝ աշխատանքի ներկայանալիս 28-րդ կետի 9.1 ենթակետի հիման վրա որոշված անձին ներկայացնելու բնակչության սանիտարա համա ճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանով սահմանված՝ աշխատանքի ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերը:»

3) Հավելվածի 43-րդ կետից հետո լրացնել նոր 43.1-րդ կետ հետևյալ բովանդակությամբ՝
«43.1. Մինչև 33.1-րդ կետով նախատեսված պարտականության խախտումը վերացնելը
յուրաքանչյուր աշխատանքային օր երկայանալը համարվում է (դիտվում է) որպես
առանձին (ինքնուրույն) կարգապահական խախտում:»
4) Հավելվածի 50-րդ կետից հետո լրացնել նոր 50.1-րդ կետ հետևյալ բովանդակությամբ՝
«50.1. Սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների խախտման հիմքով
անցկացվող ծառայողական քննության (կարգապահական վարույթի ընթացքում
քննարկվող խախտման մասին բացատրությունը (զեկուցագիր և այլն) ներկայացվում է
հատուկ՝ մեկօրյա (աշխատանքային) ժամկետում, բացատրությունը (զեկուցագրիը և այլն)
ներկայացվում է գրավոր:»
5) Հավելվածի 52-րդ կետից հետո լրացնել նոր 52.1-րդ կետ հետևյալ բովանդակությամբ՝
«52.1) համապատասխան սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների
խախտում հայտնաբերելու դեպքում առերևույթ խախտում թույլ տված անձի վերաբերյալ
տվյալները մեկօրյա (աշխատանքային) ժամկետում ներկայացվում են տվյալ անձին
կարգապահական պատասխանատվության ենթարկելու (կարգապահական տույժ
կիրառելու) իրավասություն ունեցող պաշտոնատար անձին:»
2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշման մասին տեղեկացնել աշխատակազմի
հանրային պաշտոն զբաղեցնող, հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող,
քաղաքացիական աշխատանք կատարող կամ տեխնիկական սպասարկում իրականացնող
անձանց:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
2021 թ. սեպտեմբերի 25
ք. Ձորագետ